ՈՂՋՈՒՅՆ ՆՈՐԱԾԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻՆ

Սովետական Հայաստանը, Միության ռեսպուբլիկաներից մեկը, արժանացավ սեփական ազգային Գիտության Ակադեմիա ունենալու պատվին, մի բարձր պատիվ, որի մասին քսան տարի առաջ չէր էլ կարելի երազել: Երբ ցարական ժամանակի ռուսաց Գիտությանց Ակադեմիան Սովետական Իշխանության ժամանակ վերածվեց Համամիութենական Գիտությանց Ակադեմիայի, սա կարևոր համարեց Միության բոլոր ռեսպուբլիկաներում ստեղծել տեղական օժանդակ ճյուղեր— ֆիլիալներ, որոնցից մեկն էր և Հայաստանի ֆիլիալը՝ Արմֆանը: Այս ֆիլիալները պետք է գործեին՝ Կենտրոնական Համամիութենական Ակադեմիայի հսկողության ու ղեկավարության տակ և նրան պետք է հաշիվ տային իրենց գիտական գործունեության մասին: Երբ ֆիլիալներից այս կամ այն մեկը իր գիտական գործունեության արդյունքով աչքի էր ընկնում, ցույց էր տալիս ընդունակություն ինքնուրույն աշխատանքի՝ նրան շնորհվում էր Ակադեմիայի կոչում ու իրավունք:

Այսպես առաջ եկան Ուկրաինայի և մեր հարևան Վրաստանի Ակադեմիաները: Նույն վիճակին արժանացավ այսօր և Սովետական Հայաստանը: Ուրեմն նորաբաց Հայկական Գիտությանց Ակադեմիան մի հատուկության վկայական է, որ Սովետական Իշխանությունը և Համամիութենական Ակադեմիան տալիս են Սովետական Հայաստանին, մի բարձրագույն պատիվ, որ նրանք ցույց են տալիս նրա աշխատավորներին գիտական ասպարեզում: Սա մեր նորաբաց Ակադեմիայի վրա բարոյական պարտք է դնում՝ նոր, ավելի նպաստավոր պայմաններում ավելի եռանդուն կերպով աշխատել, արդյունքներու համար իրեն ցույց տրված վստահությունը:

Այս բարձր շնորհի համար մենք երախտագետ պետք է լինենք Սովետական Իշխանության և նրա մեծ ու հանճարեղ առաջնորդ Ի. Վ. Ստալինին, որոնք ոչ միայն փրկեցին հայ ժողովուրդը անխուսափելի կորստից, ոչ միայն ստեղծեցին Հայաստանի ռեսպուբլիկան, ոչ միայն վերաշինեցին մեր ավերված ու քայքայված հայրենիքը, շենացրին գյուղերը, զարկ տվին արդյունաբերության զարգացմանը, այլև նախանձախնդիր եղան մեր կուլտուրայի՝ արվեստների ու գրականության զարգացման, ստեղծելով գիտական հիմնարկներ, համալսարան, ինստիտուտներ, խրախուսեցին հայկական գեղարվեստը, որպիսի խրախուսանքի թաղն ու պսակը կազմում է նոր հիմնվող Հայկական Ակադեմիան:

Մեծ է, շատ մեծ է Սովետական Իշխանության և նրա իմաստուն առաջնորդի՝ Ի. Վ. Ստալինի երախտիքը հայ ժողովրդի վրա, նույնքան էլ մեծ և սրտագին պետք է լինի մեր երախտագիտությունը նրանց վերաբերմամբ:

Ակադեմիկոս՝ ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆ